

«Կարևոր ենք համակարգի նշանակությունը»

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում օրերս տեղի ունեցավ մրցույթում հաղթած և քաղծառայողի պաշտոն ստանձնած քաղաքացիների երդման հանդիսավոր արարողություն: Քաղաքացիական ծառայության համակարգը համալրած 12 նոր քաղծառայողները երդվեցին հավատարիմ ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, արժանապատվորեն կրել քաղաքացիական ծառայողի բարձր կոչումը և անվերապահորեն



կատարել ծառայողական պարտականությունները: Երդման արարողությունից հետո քաղաքացիական ծառայության առաջին, երկրորդ և երրորդ դասի խորհրդականի, առաջին, երկրորդ և երրորդ դասի առաջատար և կրտսեր ծառայողի դասային աստիճաններ շնորհվեցին նախարարության աշխատակազմի 37 քաղծառայողի: Աշխատակազմի ղեկավար Վալտեր Մարությանը, շնորհավորելով քաղծառայողներին, նշեց, որ վերջին շրջանում աճել է քաղաքացիների հետաքրքրությունը նախարարությունում առկա թափուր պաշտոնների նկատմամբ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, կարևորելով տրանսպորտի և կապի նախարարության դերը հանրապետության տնտեսության մեջ, ասաց. «Նախարարությունը շատ անելիքներ ունի ճանապարհաշինության, կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում, իրազեկ հասարակություն ձևավորելու գործում: Մեր համակարգի արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է քաղծառայողների՝ իրենց գործի նկատմամբ ունեցած բարձր պատասխանատվությամբ»:

Երդման արարողությանը ներկա էր ՀՀ ՔԾ խորհրդի նախագահ Մանվել Բադալյանը:

«Յուրաքանչյուրիս կյանքում քաղաքացիական ծառայողի երդման արարողությունը և դասային աստիճան ստանալը հիշարժան իրադարձություն է: Մենք պետք է կարողանանք կարևորել և գիտակցել նոր համակարգի նշանակությունը, որի առաջին զինվորներն ենք բոլորս:

Պետական մարմինների ղեկավարների հետ, ովքեր կարևորում են և՛ քաղաքացիական հասարակության ստեղծումը, և՛ պաշտպանված, կայուն, արհեստավարժ պետական ապարատի գոյությունը, պետք է նպաստենք համակարգի կայացմանը:



«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունն ու գաղափարախոսությունը՝ անկախ քաղաքական ուժերի հարաբերակցությունից՝ ունենալ արհեստավարժ, պաշտպանված, մասնագիտական գործունեությամբ զբաղվող համակարգ, առաջին հերթին բխում է պետության շահերից: Մանվել Բադալյանը նշեց, որ այս

նախարարությունն իր ուրույն տեղն ու դերն ունի հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում:

«Նման առանձնահատուկ և նեղ մասնագիտությունների տեր մարդիկ չափազանց անհրաժեշտ են պետությանը, քաղաքացիական ծառայության համակարգին: Մենք ունենք բազմաթիվ պաշտոններ, որոնց հավակնորդներն այսօր մեր երկրում շատ քիչ են: Ուրախ եմ, որ ձեր նախարարությունը վերջին մեկուկես տարվա ընթացքում համալրվել է նոր կադրերով»,- ասաց Մանվել Բաղայանը:



Պարոն Բաղայանը շնորհավորեց նաև աշխատակազմի ղեկավար Վալտեր Մարությանին՝ ՀՀ նախագահի հրամանագրով քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ստանալու առթիվ: Այդ օրը հանդիսավոր պայմաններում աշխատակազմի անդամներին

և հայեցողական պաշտոն զբաղեցնող քաղաքացիներին հանձնվեցին սոցիալան ապահովության քարտեր՝ դրանով կարևորելով քարտերի համակարգի ներդրման պետական քաղաքականությունը:

Արմենուհի ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիան
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004-2005 ուսումնական տարվա մագիստրատուրայի
առկա ուսուցման
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

(առանց գինվորական ծառայությունից տարկետման իրավունքի)

Ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով՝
1. Հանրային կառավարում (Public Administration. առաջին ընդունելությունը
Հայաստանի Հանրապետությունում),

2. Իրավագիտություն,
3. Տնտեսագիտություն («Կառավարում»)
4. Հոգեբանություն,
5. Քաղաքագիտություն:

Ուսուցումը կատարվում է անվճար և վճարովի հիմունքներով:

Վճարովի հիմունքներով տարեկան ուսման վարձը՝

* 700 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ «Հանրային կառավարում» և

«Իրավագիտություն» մասնագիտությունների համար,

* 600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ «Տնտեսագիտություն» («Կառավարում»)

մասնագիտության համար,

* 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ «Հոգեբանություն» և

«Քաղաքագիտություն» մասնագիտությունների համար:

Ուսման տևողությունը երկու տարի է: Ակադեմիայի շրջանավարտներին տրվում է ընտրած մասնագիտության՝ հանրային կառավարման, իրավագիտության, տնտեսագիտության(կառավարման), հոգեբանության, քաղաքագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել՝

* ՀՀ պետական բուհերի շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս),

* ՀՀ ոչ պետական բուհերի հավատարմագրված մասնագիտությունների շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս): Դիմորդները հանձնում են ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից՝

* ՀՀ սահմանադրական իրավունք - գրավոր,

* մասնագիտական առարկա՝ Պետության և իրավունքի տեսություն

(«Հանրային կառավարում» և «Իրավագիտություն» մասնագիտությունների համար), Տնտեսագիտության տեսություն («Կառավարում» մասնագիտացման համար), ընդհանուր հոգեբանություն («Հոգեբանություն» մասնագիտության համար), քաղաքագիտություն («Քաղաքագիտություն» մասնագիտության համար)-գրավոր,

* Օտար լեզու (ոչ մրցութային)- գրավոր:

Ընդունելության քննություններին մասնակցելու համար անձամբ պետք է ներկայացնել՝

* դիմում,

* բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը (բակալավրի, բարձրագույն մասնագիտական կրթության, մագիստրոսի),

* վեց լուսանկար 3x4 սմ չափսի,

* անձնագիր:

Ընդունելության գործընթացի կազմակերպման համար դիմորդները վճարում են 4500 դրամ, որը, անկախ քննությունների արդյունքից, չի վերադարձվում:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը:

Ընդունելության քննությունները տեղի կունենան հուլիսի 20-ից մինչև հուլիսի 31-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ընդունող հանձնաժողովին:

Հասցեն՝ 375028, Երևան-28, Կիևյան 8, հեռախոս՝ 22-89-75:

Իմաստալի աշխարհ

Անհաջողության մատնվածին կշտամբելը դաժանություն է:

Պ. ՍԻՐՈՍ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 10 ՏԱՐԻՆ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

3. Փոխվել է մոտեցումը պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության հարցում: Դա պայմանավորված է նաև ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի փոփոխությամբ:

Նկատի ունենալով Ակադեմիայի հատուկ տեղն ու դերը ՀՀ կրթական համակարգում (նշենք, որ Ակադեմիան, չունենալով իր բազային բակալավրիատը, մագիստրոսի որակավորման աստիճան ունեցող բարձրորակ կադրեր է պատրաստում բացառապես պետական կառավարման համակարգի համար)՝ ռեկտորատը որպես պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման հիմնական ելակետ ընդունեց հետևյալ 3 խմբի դասախոսներով համալրելու սկզբունքը:

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի առաջին խումբն ապահովում է հիմնական տեսական դասընթացների դասավանդումը: Այդ խմբի մեջ ընդգրկվում են բարձր որակավորում ունեցող մանկավարժ-գիտնականներ, հիմնականում որպես հաստիքային դասախոսներ:

2. Պրոֆեսորադասախոսական կազմի երկրորդ խմբում ընդգրկվում են ՀՀ պետական կառավարման համակարգի բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր կոչված են լրացնելու ուսանողների տեսական գիտելիքները՝ իրենց ապագա աշխատանքում հմտություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ գիտելիքներով:



Այդ դասախոսները, որպես կանոն, վարում են դասընթացների առանձին թեմաներ (կիրառական ուղղվածության) և գործնական պարապմունքներ (կլոր սեղաններ, գործարար խաղեր, սեմինարներ և այլն): Անձնակազմի այդ խմբի դասախոսները հիմնականում աշխատում են ժամավճարային կարգով:

3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի երրորդ խմբում ընդգրկվում են արտասահմանյան երկրների պետական կառավարման համակարգերի պաշտոնյաներ և ուսումնական հաստատությունների դասախոսներ: Այդ դասախոսները ներկայացնում են իրենց երկրներում դասավանդման փորձը կառավարման բնագավառում: Հրավիրված այդպիսի մասնագետները վարում են առանձին դասախոսություններ կամ գործնական պարապմունքներ ոչ միայն ուսանողների, այլև Ակադեմիայի դասախոսների համար:

Պրոֆեսորադասախոսական կազմի վերոհիշյալ խմբերի ռացիոնալ հարաբերությունն ապահովում է ուսուցման առավել արդյունավետությունը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրությունն այդ սկզբունքով անմիջապես տվեց իր արդյունքները: Ակադեմիայի այսօրվա պրոֆեսորադասախոսական կազմն ունի բարձր որակ և էապես տարբերվում

է Դպրոցի պրոֆեսորադասախոսական կազմից, որի հաստիքային կարգով աշխատող դասախոսներից միայն երկուսն ուներ պրոֆեսորի գիտական կոչում: Այսօր Ակադեմիայում գիտական աստիճան ու կոչում ունեցող դասախոսների թիվը կազմում է ընդհանուր թվի 85.5%-ը: Գիտական աստիճան ու կոչում չունեցող դասախոսները հիմնականում լեզուների մասնագետներ են:

Հաստիքային դասախոսների 28.5%-ն ունի գիտության դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում, 57%-ը՝ գիտության թեկնածուի գիտական աստիճան և (կամ) դոցենտի գիտական կոչում:



Եթե Դպրոցի գործունեության ժամանակ ամբիոնների վարիչներից միայն մեկն ուներ գիտության դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում, ապա այժմ գործող 5 ամբիոնների վարիչներից 4-ն ունի գիտության դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում:

Դպրոցի, այժմ նաև Ակադեմիայի գործունեության ժամանակ ավելի բարձր է ժամավճարային կարգով աշխատող դասախոսական կազմի որակը: Այսպես, գործունեության 10 տարիների ընթացքում Ակադեմիայի ուսանողներն ունկնդրել են ՀՀ այնպիսի պաշտոնյաների, ինչպիսիք են ՀՀ վարչապետը, ՀՀ ազգային ժողովի նախագահը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, ՀՀ նախարարներ, ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ փոխնախարարներ, Երևանի քաղաքապետը, բանկերի (այդ թվում նաև Կենտրոնական բանկի) նախագահներ և այլն:

Ակադեմիայի ուսանողներն ունկնդրել են արտասահմանից ժամանած բազմաթիվ պաշտոնատար անձանց և մանկավարժների՝ Ֆրանսիայի լուսավորության, պաշտպանության, ներքին գործերի և ֆինանսների նախարարությունների 9 բարձրաստիճան պաշտոնյաների, Եվրամիության 6 աշխատակցի, Լիլի և Լիոնի կառավարման դպրոցների 6, Միլանի և Բոլոնիայի համալսարանների 4 դասախոսների և այլն:

Ակադեմիայում գործող ուսուցման տարբեր ձևերի գործունեության իրականացման աշխատանքներին զուգահեռ իրականացվում են միջոցառումներ՝ հանրային կառավարման բնագավառում ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքներն առավել ամբողջական դարձնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Դա հատկապես վերաբերում է համայնքային ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման



աշխատանքներին, որոնց դերը տեղական ինքնակառավարման մարմիններում անօգնահատելի է:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան մեծ ուշադրություն է դարձնում հետբուհական կրթությանը:

Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով բարձրագույն որակավորման կադրերի պատրաստումը հանրային կառավարման կադրերի ուսուցման ամենաարդյունավետ ձևերից մեկն է: Գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ստանալու հեռանկարը հանրային կառավարման ծառայողների մոտ ստեղծում է լրացուցիչ հետաքրքրություն դեպի ուսումը: Այս կերպ կադրերի պատրաստման առավելությունը ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքների գործընթացների զուգակցումն է:

ՀՀ պետական կառավարման ակադեմիան ասպիրանտական և դոկտորանտական ուսուցումը դիտարկում է նաև որպես Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի համալրման հիմնական միջոց:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում հետբուհական ուսուցման գործընթացներն ամբողջացնելու և նրա աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու գործում կարևոր դեր է հատկացվում Ակադեմիայում վերջերս հիմնադրված «Հանրային կառավարում» ամսագրին, որտեղ գիտական հոդվածներով կարող են հանդես գալ ոչ միայն գիտական աստիճան ունեցող մասնագետները, այլև հայցորդները, ասպիրանտները և դոկտորանտները:

Իր գոյության 10 տարիների ընթացքում ՀՀ ՊԿ ակադեմիան կանոնավոր կերպով միջազգային համագործակցություն (այսուհետ՝ ՄՀ) է իրականացրել տարաբնույթ միջազգային ծրագրերի միջոցով:

ՀՀ կառավարման դպրոցն իր տեսակի մեջ առաջինն էր ԱՊՀ երկրներում, որի ստեղծման, գործունեության սկսման ու ծավալման գործում կարևոր դեր խաղացին Եվրամիության ՏԱՄԻՍ-ի (ԱՊՀ երկրների տեխնիկական աջակցություն) երկու ծրագրերը. 1. «ՀՀ պետական կառավարման համակարգի հզորացում և բարեփոխում» ծրագիրը, որտեղ ՀՀ ԿԴ-ի ստեղծումը ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկն էր: 2. «ՀՀ կառավարման դպրոցի հզորացմանն ուղղված աջակցություն» ծրագիրը, որն ամբողջովին վերաբերում էր ՀՀ կառավարման դպրոցին:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԹԾ խորհուրդը խոր կսկիծով իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում Ստյոպա Պողոսի Մկրտչյանի հարազատներին ու մտերիմներին՝ նրա վաղաժամ մահվան կապակցությամբ:

Ստյոպա Մկրտչյանը ծնվել է 1943 թվականին Գյումրում:

1968-ին ավարտելով Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը՝ նա մոտ մեկ տասնամյակ աշխատել է արտասահմանյան միջառք երկրներում:

1979-ին վերադարձել է Հայաստան և զբաղեցրել տարբեր պաշտոններ: 1991-92 թթ. եղել է Հայաստանի նավթամթերքների ապահովման պետական կոմիտեի նախագահ, 1995-96 թթ.՝ «Ռոսնեֆտ» ՓԲԸ-ի բաժնի վարիչ:

1996-97թթ. «Իտեռա» միջազգային էներգետիկ կորպորացիայում եղել է բաժնի վարիչ, իսկ 1999-2001 թթ.՝ Երևանի էլեկտրացանցի «Արշակունի» մասնաճյուղի տնօրեն:


2002 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ կառավարության որոշմամբ նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար: ՀՀ նախագահի 2003 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրով նրան շնորհվել է ՀՀ քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Քաղաքացիական ծառայությունը ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Այսօր Ֆրանսիայում գործող քաղաքացիական ծառայության օրենսդրությունն արդյունք է այն բարեփոխումների, որոնք սկսվեցին երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: 1946-ից գործում է «Պետական ծառայողի ընդհանուր կարգավիճակի մասին» օրենքը: Այն կարգավորում է քաղաքացիական ծառայության կառուցվածքը և վարձատրության համակարգը: 1959թ. էական փոփոխություններ կատարվեցին օրենքում:

Սրանից զատ կա «պաշտոնյաների դասակարգ», հասկացություն: Դասակարգերը կան խմբերը 4-ն են և նվազող աստիճանակարգով բաժանվում են A, B, C և D խմբերի: A խմբի պաշտոնյաները մշակում են որոշումներն ու ցուցումները: Նրանք պետական կառավարում իրականացնող պաշտոնյաների միայն 20 %-ն են կազմում: B խումբը կատարում է այս ցուցումները: Այս խմբին է պատկանում պաշտոնյաների 40 %-ը: C խումբն ընդգրկում է պաշտոնյաների 32%-ը և իրականացնում է մասնագիտական գործունեություն: D խումբն ընդգրկում է տեխնիկական սպասարկում իրականացնողներին: Ֆրանսիացի վարչարարների կարծիքով, դժվար է հստակ սահմանագիծ անցկացնել վերջին երկու խմբերում ընդգրկված ծառայողների միջև: Ո՛չ 1946 թվականին ընդունված օրենքը, ո՛չ 1959-ին կատարված փոփոխությունները (Օրդոնանս) չեն ներառում ողջ քաղաքացիական ծառայությունը Ֆրանսիայում: Այս օրենքներով հաստատված կարգավիճակը չի տարածվում պետական մի շարք ծառայողների վրա՝ դատավորների, զինվորների, արտադրական և առևտրային բնույթի պետական ծառայության աշխատակիցների, ոստիկանության:



Օրենսդրության համաձայն՝ անձը չի կարող զբաղեցնել քաղաքացիական ծառայության պաշտոն, եթե

- չունի Ֆրանսիայի քաղաքացիություն,
- չունի քաղաքացիական իրավունքներ և չի բավարարում ընդունված բարոյական չափանիշներին,
- խախտում է զինվորական ծառայության օրենսդրությունը:

Վերջին պահանջը գործնականում նշանակում է՝ ծառայողը կան պետք է պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած լինի, կամ՝ ազատված: Թեկնածուների ընտրությունը տեսականորեն իրականացվում է մեկ չափորոշիչով. այն է՝ կարողանալ կատարել քաղծառայողի պարտականությունները:

Ֆրանսիական օրենսդրության մեջ ամրագրված է նաև 1946 թ. Հրահանգը, որը սահմանում է պարտականությունների շրջանակը և

հաստատում յուրաքանչյուր խմբի կրթական անհրաժեշտ մակարդակը: A խմբի մրցութային քննություններն ուղղված են ընդհանուր ու տեխնիկական գիտելիքների բացահայտմանը և պետք է համոզեն, որ թեկնածուներն ունեն բավարար մտավոր ունակություններ և հաստատուն բնավորություն: Իհարկե, անհրաժեշտ է նաև բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմ:

B խմբի հավակնորդները պետք է կարողանան որոշել, գնահատել և բացահայտել իրենց ենթակայության տակ գտնվողների գործունեությունը՝ հիմնվելով օրենսդրության վրա: Սա բավական բարդ գործառույթ է, քանի որ յուրաքանչյուրի հանդեպ ընդհանուր մոտեցումը պահանջում է ճկունություն և մասնագիտական հարուստ գիտելիքներ: Այս խումբը համալրելու համար անցկացվող մրցութային արձակուրդի տեխնիկական բնույթի են, քան բարձրագույն A խմբի համար անցկացվող մրցութայինները, սակայն այստեղ ևս պահանջվում է հանրակրթական ու մասնագիտական կրթության բարձր մակարդակ: C խմբի մրցութային հաղթողներն իրականացնում են տեխնիկական աշխատանք. անձնական նախաձեռնություն այստեղ չի պահանջվում: D խմբի համար անցկացվող մրցութայիններում ընդգրկվում են աշխատակիցներ, ովքեր չունեն մասնագիտական որակավորում, ուստի այս խմբի համար անցկացվող մրցութայիններին ներկայացվող պահանջները դուրս չեն գալիս հանրակրթական դպրոցի ծրագրի շրջանակներից:

Մրցութային հանձնաժողովն ընտրվում է իրազեկ մասնագետներից, ովքեր աչքի են ընկնում իրենց անկողնակալությամբ: Այն լիովին անկախ է վարչակազմից: Մրցութային երկու փուլից է բաղկացած՝ գրավոր և հարցազրույցի: Գրավոր փուլը կարող է տարբեր հանձնարարություններ ներառել՝ տեքստի խմբագրում, որոշակի թղթածրարի (փաթեթ) պատրաստում և այլն: Հարցազրույցի փուլում գնահատվում են թեկնածուների ընդհանուր վարվելակերպը, անհրաժեշտ գիտելիքները, ինչպես նաև իրենց մտքերը տրամաբանորեն շարադրելու ունակությունը: Երբեմն նաև թեստավորում է անցկացվում:

Ֆրանսիայում մրցութայինները լինում են արտաքին և ներքին: Արտաքին մրցութային միջոցով ընտրվում են նոր պաշտոնյաներ, ներքին մրցութայինները նպատակաուղղված են պաշտոնյաների մի մասի աստիճանակարգով առաջխաղացմանը:

Պետական ապարատի համար կադրեր պատրաստելու գործում էական ներդրում ունի Վարչակազմի ազգային դպրոցը: Այս բարձրագույն ուսումնական հաստատություն են ընդունվում բարձրագույն կրթությամբ 26 տարեկանից ոչ բարձր անձինք և 30 տարեկանից ոչ բարձր պետական ծառայողներ, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

Պաշտոնական առաջխաղացումն ավարտվում է՝ որոշակի տարիքի հետ կապված, որը կարևոր հանգամանք է ծառայողների համակարգը նոր կադրերով համալրելու համար: Հաճախ առավելագույն տարիք է համարվում 60-63 տարեկանը, սակայն բացառիկ դեպքերում՝ պայմանավորված զբաղեցրած պաշտոնով՝ 58-75-ը:

Ֆրանսիայում պետական ծառայողների իրավական կարգավիճակն ամրագրված է Ֆրանսիական սահմանադրությամբ, 1946թ. հոկտեմբերի 19-ի «Պետական ծառայողների ընդհանուր կարգավիճակի մասին» օրենքում, 1959թ. փետրվարի 4-ի պետական ծառայության Օրդոնանսում, 1946թ.

Ջրահանգի և համապատասխան մարմինների նորմատիվ իրավական
ակտերում:

Պատրաստեց Աննա Գրիգորյանը